ՆԱԽԱԳԻԾ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի պաշտոնակատարի 25.12.2018թ. թիվ 1187 Լ/Կ հրամանի

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ, ՆԵՐԴՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 10 25.12.2018թ.

Վանաձոր

2018թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Վանաձորի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) Ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) իրականացման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ) մշակվել է համաձայն «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, «ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակը (ՀՀ կրթության որակավորումների և դրանց համապատասխանող ընդհանրական բնութագրերը)» փաստաթղթում ամրագրված պահանջների, «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության, Համալսարանի 2014-18թթ զարգացման հայեցակարգի, Համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի որակի ապահովմանը ու մշտադիտարկմանը վերաբերող փաստաթղթերի պահանջների՝ հաշվի առնելով «Եվրոպական կրթական տարածքում որակի ապահովման չափանիշներ և առաջարկներ»-ի դրույթները և «Եվրոպայի բարձրագույն կրթության տարածքի կառույցների կարգաբերում» (TUNING) նախագծի առաջարկները:

2. Ելնելով Համալսարանի՝ 2014-18թթ զարգացման տեսլականից և առաքելությունից՝ սույն Ընթացակարգը ուղղված է Համալսարանի ՄԿԾ-ների մշակման և ներդրման, ներդրված վերանայման գործընթացների կարգաբերմանը՝ համաձայն Ռազմավարության դրույթների:

3. ՄԿԾ-ն ուսումնական գործընթացի նպատակները, ակնկալվող արդյունքները, բովանդակությունը, իրականացման պայմանները և տեխնոլոգիաները, շրջանավարտի պատրաստվածության որակի գնահատումը կանոնակարգող փաստաթղթերի փաթեթ է:

4. Համաձայն ՄԿԾ-ների որակին ներկայացվող Բոլոնյան գործընթացի պահանջների՝ յուրաքանչյուր ՄԿԾ պետք է համապատասխանի հասարակության և աշխատաշուկայի պահանջներին, ընդունվի գիտակրթական հանրության կողմից, ունենա թափանցիկ և հասկանալի կառուցվածք, որը թույլ կտա այն համադրել այլ բուհերի նույնանման ծրագրերի հետ՝ այդպիսով ապահովելով ուսանողների շարժունությունը և կրթության վերջնարդյունքների ճանաչումը: ՄԿԾ-ն պետք է լինի հասկանալի, ընդունելի և գրավիչ ուսանողների համար:

II. ՆՈՐ ՄԿԾ-ի ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՎԱԾ ՄԿԾ-ների ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԸ

***5.* Նոր ՄԿԾ-ի մշակման, արտոնման և ներդրման** գործընթացն իրականացվում է ենթադրյալ բոլոր շահառուների (համապատասխան ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմ, Համալսարանի որակի կենտրոնի աշխատակիցներ, ուսանողներ, գործատուներ, ակադեմիական հանրություն, հասարակայնության ներկայացուցիչներ) ակտիվ մասնակցությամբ՝ հարցումների, քննարկումների, կլոր սեղանների, ձևավորված ֆոկուս-խմբերի աշխատանքի միջոցով:

Նոր ՄԿԾ-ի մշակման և ներդրման գործընթացը ենթադրում է հետևյալ քայլերի կատարման հաջորդականություն.

1) աշխատաշուկայում տվյալ մասնագիտությամբ կամ ուղղվածությամբ մասնագետների կարիքի վերհանում:

2) Նույն ուղղվածությամբ տարբեր համալսարաններում ներդրված ՄԿԾ-ների համեմատական վերլուծություն (բենչմարքինգ) նախաձեռնող խմբի կողմից:

2) ՄԿԾ-ի հայեցակարգի մշակում նախաձեռնող խմբի կողմից և քննարկում ֆակուլտետային խորհրդում՝ նոր ՄԿԾ-ի մշակման և ներդրման անհրաժեշտությունը որոշելու նպատակով:

3) **Գիտխորհրդի դրական եզրակացության դեպքում ՄԿԾ-ի մշակման աշխատանքային խմբի ձևավորում: Խմբի կազմում ընդգրկվում են.**

ա) համապատասխան ամբիոնի փորձառու պրոֆեսորներ, դոցենտներ, դասախոսներ,

բ) ուսումնամեթոդական վարչության ներկայացուցիչ,

գ) որակի ապահովման կենտրոնի առնվազն մեկ ներկայացուցիչ,

դ) մասնագիտական ոլորտին առնչվող հիմնական գործատուների առնվազն մեկ ներկայացուցիչ,

ե)գիտակրթական համապատասխան ոլորտի արտաբուհական առնվազն մեկ մասնագետ,

ժ) բակալավրիատի բարձր կուրսերի և մագիստրատուրայի ուսանողներ:

Խմբի անդամներից մեկը ընտրվում է ղեկավար, որը պատասխանատու է ՄԿԾ-ի մշակման և ամբողջական փաթեթի ստեղծման համար:

4) ՄԿԾ-ի մասնագրի մշակում.

ա) <u>**նպատակի և խնդիրների ձևակերպում:**</u> Նոր ՄԿԾ-ի նպատակը և խնդիրները պետք է բխեն Համալսարանի զարգացման տեսլականից և առաքելությունից և նպաստեն ռազմավարական պլանի դրույթների իրագործմանը:

բ) <u>Դուբլինյան նկարագրիչների հիման վրա աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունների, գործառույթների որոշում՝ ըստ ՈԱՇ-ի ՄԿԾ շրջանավարտների կրթության մակարդակի:</u>

5) **ՄԿԾ-ի մշակման և ներդրման հետ կապված առաջացող հնարավոր ռիսկերի քննարկում և վերհանում, դրանց հաղթահարմանն ուղղված հիմնական գործողությունների պլանավորում:**

6) Համալսարանի՝ ՄԿԾ-ի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ կադրային ռեսուրսներին (դասախոսներ, լաբորանտներ, սպասարկող անձնակազմ) ներկայացվող **պահանջներին, նյութատեխնիկական, ֆինանսական ռեսուրսներին վերաբերող խնդիրների վերհանում, քննարկում, որոշումների կայացում:**

7) ՄԿԾ–ի ձեռքբերումները հավաստող գնահատման մեթոդների, ցուցիչների մշակում:

8) ՄԿԾ-ի ամբողջական փաթեթի ներկայացում արտաքին փորձաքննության (առանձին դեպքերում):

9) **Փորձաքննության դրական եզրակացությունից հետո մշակված ՄԿԾ-ի փաթեթի ներկայացում** ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին՝ լիցենզավորման արտոնություն ստանալու նպատակով *(Հավելված 1)*:

10) ՄԿԾ-ի ներքին փորձաքննության նպատակով ուսումնական աշխատանքների գծով **պրոռեկտորի կողմից ՄԿԾ-ի փորձաքննական հանձնաժողովի ձևավորում:**

11) Տվյալ ՄԿԾ-ի վերաբերյալ փորձաքննական հանձնաժողովի եզրակացության ներկայացում ֆակուլտետային գիտխորհրդին:

12) Ֆակուլտետային գիտխորհրդի որոշման ընդունում՝ տվյալ ՄԿԾ-ն Համալսարանի գիտխորհրդին ներկայացնելու համար:

13) ՄԿԾ-ի փաթեթի [ՄԿԾ-ի մասնագրի, արտոնման եզրակացության, արտաքին փորձաքննության եզրակացության (առկայության դեպքում)] ներկայացում Համալսարանի գիտխորհրդին՝ ֆակուլտետի գիտխորհրդի դրական եզրակացության դեպքում(հավելված 2՝ ժամանակացույց Համալսարանի բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ի արտոնման, փորձաքննության և հաստատման):

6. Ներդրված ՄԿԾ-ների վերանայման գործընթացի իրականացում համաձայն հետևյալ քայլերի հաջորդականության.

1) բակալավրիատի և մագիստրատուրայի ՄԿԾ-ների մշտադիտարկման անցկացում, տվյալների ամփոփում և վերլուծություն՝ SWOT-վերլուծության, բենչմարքինգի և այլ տեխնոլոգիաների կիրառմամբ:

2) տվյալների ներկայացում ֆակուլտետային գիտխորհրդում՝ ՄԿԾ-ի վերանայման անհրաժեշտությունը որոշելու համար:

3) ֆակուլտետային գիտխորհդի դրական եզրակացության դեպքում ներդրված ՄԿԾ-ի վերանայման աշխատանքային խմբի ձևավորում՝ կազմված ՄԿԾ-ի մշակմանը մասնակցած, ՄԿԾ-ի իրականացման գործընթացում ընդգրկված դասախոսներից, արտաբուհական ակադեմիական հանրության ներկայացուցիչներից, համապատասխան աշխատանքային ոլորտի գործատուներից, բակալավրիատի բարձր կուրսերի և մագիաստրատուրայի ուսանողներից:

4) աշխատանք ՄԿԾ-ի արդիականացման, վերհանած բացթողումները շտկելու ուղղությամբ:

5) Վերանայված ՄԿԾ-ի քննարկման, հաստատման և ներդրման գործընթացի իրականացում համաձայն վերոշարադրյալ նոր ՄԿԾ-ի համար կիրառվող քայլերի:

III. ՄԿԾ-ի ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՄԱՍԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԸ

7. ՄԿԾ շրջանավարտների՝ ակնկալվող կոմպետենցիաների խմբերի, առանձին կոմպետենցիաների քննարկում, ձևակերպում և համաձայնեցում ենթադրվող գործատուների, Համալսարանի ղեկավար անձնակազմի, դասախոսական կազմի, շահառուների հետ: Հիմնական փուլի աշխատանքների կատարում ըստ հետևյալ քայլերի.

1) յուրաքանչյուր կոմպետենցիայի վերաձևակերպում ուսուցման ակնկալվող վերջնարդյունքների (գիտենալ, կարողանալ, տիրապետել) տեսքով՝ ծրագրում ընդգրկվող ուսումնական մոդուլները (դասընթացները) որոշելու համար: Վերջնարդյունքների միջոցով կոմպետենցիայի կառուցվածքի նկարագրություն, նրա բարտեզի կազմում՝ համաձայն Համալսարանի «Դասընթացի կոմպետենցիայի մշակման մեթոդական ուղեցույց»-ի:

2) նկարագրիչների (դեսկրիպտորների) ձևակերպում ուսանողի կողմից ուսուցման յուրաքանչյուր վերջնարդյունքի ձեռքբերումը գնահատելու համար, գնահատման միջոցների լրակազմի ձևավորում [տե՛ս «Կանոնակարգ ուսանողների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների (կոմպետենցիաների) ստուգման-գնահատման միջոցների լրակազմի ձևավորման»]:

3) ՄԿԾ-ի կառուցվածքի նախնական տարբերակի (կոմպետենցիաների ձեռքբերմանն ուղղված մոդուլների, առանձին դասընթացների, ուսումնական աշխատանքների այլ տեսակների համալիրի մշակում) ստեղծում՝ ՄԿԾ-ի ենթադրվող դասախոսների, ուսումնամեթոդական վարչության մեթոդիստների, գործատուների համատեղ աշխատանքի միջոցով:

4) Կրեդիտային միավորներով ՄԿԾ-ի հիմնական կրթամասերի աշխատածավալի որոշում՝ հաշվի առնելով բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ընդհանուր ծանրաբեռնվածությունը (համապատասխանաբար 240 և 180 կրեդիտային միավոր):

5) Դասավանդման մեթոդների, ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարման սկզբունքների և կազմակերպչական խնդիրների որոշում (տե՛ս «Կարգ ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի կազմակերպման և արդյունքների գնահատման»):

6) Ուսանողների գիտելիքների ստուգման ձևերի և մեթոդների որոշում (տե՛ս «Կանոնակարգ բալային–ռեյթինգային համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման»): Առաջադիմության ընթացիկ, միջանկյալ, հանրագումարային ստուգումների, կուրսային աշխատանքների, պրակտիկաների կատարման և գնահատման ձևերի, ՄԿԾ-ների յուրացումը գնահատող պետական ատեստավորման ձևերի և այլնի որոշում: Պետական ատեստավորման ժամանակ ստուգվող կոմպետենցիաների ցուցակի կազմում, ատեստավորման անցկացման ընթացակարգերի, գնահատման չափանիշների որոշում:

7) ՄԿԾ-ում ընդգրկված մոդուլների (դասընթացների) յուրացման, այլ ուսումնական աշխատանքների կատարման հաջորդականության, հատկացված կրեդիտային միավորների որոշում: Ըստ ուսումնառության տարիների բազային ուսումնական պլանի կազմում՝ մեկ ուսումնական տարվա ուսումնական բեռնվածքը 60 կրեդիտային միավորին համապատասխանեցմամբ:

Բազային ուսումնական պլանի կազմում ըստ հետևյալ կրթամասերի՝

- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ
- ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ
- ընդհանուր մասնագիտական դասընթացներ (մոդուլներ)
- հատուկ մասնագիտական դասընթացներ (մոդուլներ)
- այլ բաղադրիչներ:

8) կամընտրական դասընթացների նախատեսում յուրաքանչյուր կրթամասի համար (տե՛ս «Կարգ ՎՊՀ կրթական ծրագրերում ընդգրկված կամընտրական դասընթացների ընտրության»):

9) Հետադարձ կապի ապահովում՝ մշակված ուսումնական պլանով ուսանողի կողմից նախատեսած կոմպետենցիաների ձեռքբերման մակարդակը և որակը (ՄԿԾ-ի տարրերը բարեխիղճ յուրացնելու դեպքում) վերլուծելու, կրթական միջավայրը բարելավելու համար: Թերությունների և բացթողումների բացահայտման դեպքում մշակված ուսումնական պլանում, կրթական գործընթացում անհրաժեշտ ուղղումների կատարում:

10) Մոդուլների, առանձին դասընթացների ուսումնամեթոդական փաթեթների (ԱՈՒՓ) մշակում՝ ներառյալ ուսուցման վերջնարդյունքները, կրթական տեխնոլոգիաները, դասավանդման մեթոդիկաները, ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարման, գիտելիքների ստուգման կիրառվող մեթոդները և ձևերը: Ուսանողի և դասախոսի կոնտակտային ժամերի ներկայացումը ըստ աշխատանքների ծավալի և տեսակի (դասախոսություն, գործնական/սեմինար/լաբորատոր պարապմունք, պրակտիկա և այլն): Ուսուցման վերջնարդյունքների գնահատման համակարգի մանրամասն նկարագրություն՝ գնահատման միջոցների լրակազմի ներկայացմամբ:

11) Ուսումնական աշխատանքային պլանի կազմում՝ ուսումնական մոդուլների, դասընթացների, պրակտիկաների, գիտելիքների ստուգման, ուսումնական այլ աշխատանքների հաջորդականությամբ, այդ բաղադրիչներին հատկացված կրեդիտային միավորներով, ակադեմիական ժամերով:

IV.ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

8. Նոր ՄԿԾ-ի ներդրման իրականացում համաձայն նախօրոք մշակված պլանի:

9. Ծրագրի պարբերական մշտադիտարկում ներդրված կրթական ծրագրի բացթողումները և թերությունները վերհանելու համար՝ Համալսարանի որակի կենտրոնի, համապատասխան ամբիոնի և ուսումնամեթոդական վարչության համատեղ գործողություններով, համաձայն Համալսարանում ընդունված մշտադիտարկման Կարգի, հետադարձ կապի մեխանիզմների օգտագործմամբ: Մշտադիտարկման պարբերականությունն է՝ 2 անգամ ուսումնական տարվա ընթացքում:

10. Մշտադիտարկման արդյունքների քննարկում ՄԿԾ-ի մշակման և ներդրման գործընթացներում ներգրավված բոլոր շահառուների հետ, վերհանած թերությունները վերացնելու ուղիների մշակում, համապատասխան փոփոխությունների իրականացում:

Հավելված 1

ՄԿԾ-ի մշակման հայտի ձևաթերթ

Հաստատում եմ
_____201_թ
Ուս. աշխատանքների գծով պրոռեկտոր
_____

1. Ընդհանուր դրույթներ

_____
ֆակուլտետը
_____
ԿԾ-ի անվանումը և դասիչը
_____
ՈԱԾ-ի մակարդակը, շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)

2. ՄԿԾ-ի մշակման նպատակը և խնդիրները

_____
_____
_____

3. ՄԿԾ-ի մշակման ռազմավարական գործողությունները

_____
_____
_____

4. ՄԿԾ-ին ներկայացվող պահանջները

_____
_____
_____

5. ՄԿԾ-ի կառուցվածքը և բովանդակությունը
   5.1 ՄԿԾ-ի բնութագիրը

_____
_____
_____

5.2 Շրջանավարտի մասնագիտական գործունեության բնագավառը

_____
_____
_____

5.3 Ուսուցման վերջնարդյունքներին ներկայացվող պահանջները

_____
_____
_____

5.4 Մասնագիտության ընդհանուր բնութագիրը

_____

_____

_____

5.5 ՄԿԾ-ի ուսպլանը (մոդուլային կառուցվածքով)

_____

_____

5.6 Շրջանավարտին ներկայացվող պահանջները

_____

_____

_____

5.7 ՄԿԾ-ի ուսումնամեթոդական ապահովումը

_____

_____

_____

5.8 Պրակտիկան

_____

5.9 Պահանջվող կոմպետենցիաների ձևավորման համար անհրաժեշտ ռեսուրսները

_____

_____

_____

5.10 ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ կրթական տեխնոլոգիաներ և մեթոդներ

_____

_____

5.11 Արդյունքների գնահատում և ստուգում

_____

_____

ՄԿԾ (վերա)մշակման մասնագիտական խմբի

(ԾԿՄԽ) ղեկավար՝ _____

Անդամներ՝ _____

_____

_____

_____

ՄԿԾ-ը քննարկվել և հավանության է արժանացել ՖՄԽ կողմից

_____

նիստի համարը, թիվը, ամսաթիվը

Ֆակուլտետի դեկան՝ _____

Հավելված 2

ՄԿԾ-ի մշակման ժամանակացույց

Ժամկետը	Գործողություն	Պատասխանատու	Կատարման ցուցիչ
1-ը նոյեմբերի	Աշխատաշուկայի ուսումնասիրություն և վերլուծություն, բենչմարքինգ	Նախաձեռնող խումբ, շահառուներ	Տվյալ մասնագիտությամբ մասնագետների պահանջվող թիվը, Բենչմարքինգի արդյունքում վերհանած տվյալների համալիր
1-ը դեկտեմբերի	ՄԿԾ-ի հայեցակարգի մշակում	Նախաձեռնող խումբ	Մշակված հայեցակարգ
25-ը դեկտեմբերի	ՄԿԾ-ի հայեցակարգի և հայտի ներկայացում ֆակուլտետի գիտխորհրդին	Նախաձեռնող խումբ	Ֆակուլտետի գիտխորհրդի որոշում
1-ը փետրվարի	ՄԿԾ-ի մշակման աշխատանքային խմբի ձևավորում	Ֆակուլտետի գիտխորհուրդ	Աշխատանքային խմբի կազմ
1-ը մարտի	ՄԿԾ-ի մասնագրի մշակում	Աշխատանքային խումբ	ՄԿԾ-ի մասնագիր
15-ը մայիսի	ՄԿԾ-ի կադրային, ֆինանսական, նյութատնտեսական ռեսուրսներին վերաբերող տվյալների հավաքագրում, վերլուծություն:	Աշխատանքային խումբ	ՄԿԾ փաթեթ
1-ը հունիսի	ՄԿԾ-ի մշակման և ներդրման հետ կապված հնարավոր ռիսկերի և դրանց կանխարգելման ուղիների մշակում	Աշխատանքային խումբ	Ռիսկերի կառավարման քաղաքականության մշակում
1-ը հուլիսի	ՄԿԾ-ի ամբողջական փաթեթի ներկայացում Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին	Աշխատանքային խումբ	Պրոռեկտորի որոշում՝ տվյալ ՄԿԾ-ի մշակման անհրաժեշտության մասին
15-ը հուլիսի	ՄԿԾ փորձաքննական հանձնաժողովի ձևավորում	Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր	Հանձնաժողովի կազմ

15-ը սեպտեմբերի	ՄԿԾ փորձաքննություն	Փորձաքննական հանձնաժողով	Փորձաքննական հանձնաժողովի եզրակացություն
15-ը մարտի	ՄԿԾ բովանդակային մասի մշակում (ըստ սույն ընթացակարգի III բաժնի 7-րդ կետի ենթակետերի)	Աշխատանքային խումբ	ՄԿԾ-ի ԱՈՒՄՓ-ների և այլ բաղադրիչների փաթեթ
1-ը ապրիլի	ՄԿԾ-ի վերջնական փաթեթի ներկայացում ֆակուլտետի գիտխորհրդին	Աշխատանքային խումբ	Քաղվածք ֆակուլտետի գիտխորհրդի որոշումից՝ ՄԿԾ-ն Համալսարանի գիտխորհրդին ներկայացնելու համար:
25-ը ապրիլի	ՄԿԾ-ի քննարկում և որոշման կայացում Համալսարանի գիտխորհրդում	Գիտխորհրդի քարտուղար	Քաղվածք՝ ՄԿԾ-ի ներդրման վերաբերյալ: